ԿԱՐՄՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Աշխատանքի անվանումը	*Կարմրաշեն գյուղական բնակավայրում արտաքին լուսավորության ցանցի կառուցում*
Ընդհանուր նկարագրություն	*Անհրաժեշտ է՝* ✓ *Տարածքի ինժեներաերկրաբանական հետազննության իրականացում,* ✓ *Լուսավորության ցանցի կառուցում Կարմրաշեն գյուղում*
Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք	Նախատեսվում է 1. Կարմրաշեն գյուղում կառուցել 2.365 կմ երկարությամբ /սյուների քանակը՝ 81, երկարությունը՝ 7 մ, տրամահիծը՝ 89մմ, սյունի պատի հաստությունը՝ 4մմ, լուսատուները՝ ԼԵԴ 40 վտ/ լուսավորության ցանց, - երթևեկելի մասի լայնություն՝ 5մ, ծածկույթը՝ հողային, առանց մայթերի, - շարժման գոտիների քանակ՝ 2: Հենասյուների ցանկալի տեղադրումը՝ մեկ կողմից՝ փողոցի արտաքին սահմանից դուրս:
Ընդհանուր դրույթներ	Աշխատանքային նախագիծը կազմվում է՝ ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան: Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշման 8-րդ հավելվածով հաստատված շինարարական աշխատանքների արժեքների հաշվարկման կարգով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ Նախատեսվում է հեղինակային հսկողություն, որը նախագծողն իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում: Ցանկալի է, որ նախագծողը, հաշվի առնելով ելքային տվյալները, մոդելավորի լուսավորության սխեման և ընտրի լուսատուների պահանջվող և օպտիմալ լուսային հոսքի քանակը, բաշխման ձևը և ճանապարհի նկատմամբ տեղադրման դիրքը ու անկյունը, ըստ այդմ որոշի լուսավորության հենասյուների բարձրությունը և բռնակի պարամետրերը, լուսատուի հզորությունը, ինչպես նաև հենասյուների միջև հեռավորությունը: ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝ ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները, գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները, դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով, ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը, ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝

	էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%): Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝ **-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի համապատասխան մասի լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր, ճարտարապետահատակագծային առաջադրանք, լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի, հասարակական և արտադրական ոլորտ/, տեխնիկական վիճակի հետազոտության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/, ընդհանուր բացատրագիր, հատակագծեր, շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր, հիմնական շինարարական նյութերի, կոնստրուկցիաների ամփոփագրեր, մասնագրեր, աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր, **-Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ: Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով: Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի:
Հիմնական պարտականություններ և պահանջներ	***Հիմնական պարտականություններ՝*** 1.հետազննման աշխատանքների իրականացում, 2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում, ***Հետազննման վերաբերյալ պահանջներ՝*** • հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով, • հետազննման ընթացքում իրականացնել շենքերի տանիքների առկա վիճակի տեսանկարահանում: ***Նախագծի նկատմամբ պահանջներ*** • Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին: • Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝ ***Համաձայնեցումներ՝*** • քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական, • նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ, • տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը
Նորմատիվային պահանջներ	• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան: • Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան: • ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ-ի No.128-Ն հրամանով հստատված ՀՀՇՆ 22-03-2017 ‹‹Արհեստական և բնական լուսավորում›› շինարարական նորմեր: • ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017թ. սեպտեմբերի 11-ի № 128-Ն հրամանով հաստատված՝ բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների

	նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոններ: • Ընտրված լուսատուները պետք է համապատասխանեն ՄՄ ՏԿ/004/2011 «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» և ՄՄ ՏԿ/020/2011 «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին: • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի:

Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան

Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru

Համայնքի ղեկավար՝ **Վարդան Հովհաննիսյան**

Կ.Տ.